ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ, ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՏՋԻԼՈՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 1 - 2 (16299) ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՀՈՒՆՎԱՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Ամանորյա ուղերձ հղեց Վրաստանի բնակչությանը:

Ուղերձում, մասնավորապես, նշված է. «2014 թվականը նշանակալից էր մեր երկրի համար: Մենք նշանակալից քայլ կատարեցինք մեր նախնիների նպատակի՝ ազատ, անկախ, բարօրության վրա հիմնված հասարակությունում ապրելու նպատակի իրականացման ճանապարհին»,- ընդգծեց նախագահը: «Հավատում եմ, որ մեր բազմադարյա մշակույթը թույլ է տալիս մեզ հասնել մեր նպատակին, ունենք ունակություն ու հմտություն եւ չենք խնայի մեր ջանքերը, որպեսզի Վրաստանը դառնա հզոր, միասնական երկիր, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն կունենա արժանապատվորեն ծառայել իր ընտանիքին եւ մեր ընտանիքին»,- ասված է Վրաստանի նախագահի ուղերձում:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին իր Ամանորյա ուղերձում ընդգծեց, որ 2014-ը ծանր տարի էր տարածաշրջանի եւ ողջ աշխարհի համար, սակայն «Վրաստանի կառավարությունը կարողացավ երկրում պահպանել խաղաղությունն ու կայությունը եւ դա կարող է դառնալ առաջիկա հաջողությունների հիմքը»,- ասվում է վարչապետի ուղերձում:

Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց, որ «Կառավարությունն իրականացրել է բարեփոխումներ առողջապահության, ապահովագրության, գյուղատնտեսության, կրթության ոլորտներում: 2015 թվականին բարեփոխումները կշարունակվեն, կիրականացվեն քայլեր նոր աշխատատեղերի ստեղծման, նոր ներդրումների ներգրավման, էկոնոմիկայի զարգացման համար»,- ասված է վարչապետի Ամանորյա ուղերձում:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ելույթ ունեցավ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ ուղերձով:

Նախագահի ուղերձում, մասնավորապես, ասված է. «Սիրելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ ձեզ Նոր Տարվա եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Անցնող տարում մենք շարունակեցինք մեր ընթացքը, շարունակեցինք կառուցել, շարունակեցինք

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՅՐԵՐԸ ՎԻՐԱՀԱՅԵՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին շնորհավորական ուղերձ հղեց վիրահայությանը Սուրբ Ծննդի եւ Աստվածահայտնության տոնի առթիվ: Նախագահի ուղերձում, մասնավորապես, ասված է. «Հայ եւ վրաց ժողովուրդների եղբայրությունը հազարամյակների պատմություն ունի: Այդ ժամանակահատվածում դուք վրացիների այս հողի վրա ապրող մյուս ազգերի հետ միասին հոգում եք մեր ընդհանուր հայրենիքի բարօրության ու զարգացման համար:

Վրաստանը հպարտանում է այստեղ ծնված շատ հայ համերկրացիների, ինչպես մեր երկրի մյուս մեծ որդիների՝ մշակույթի, թե գիտության անվանի գործիչներով: Առողջություն, երջանկություն, խաղաղություն եւ բարօրություն եմ մաղթում ձեզ եւ ձեր ընտանիքներին»,- ասված է Վրաստանի նախագահի ուղերձում:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին վիրահայությանն ուղղ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

2015 թվականի առաջին տաղավար տոնը՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության ավետիսը Վիրահայոց թեմում նշվեց պատշաճ հանդիսությամբ: Դեռեւս հունվարի 5-ի երեկոյան Վիրահայոց թեմի եկեղեցիներում մատուցվեց Ճրագալույցի Սուրբ Պատարագ:

Հավատացյալներով լեփ-լեցուն Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ, որի պատարագիչն էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հայոց եկեղեցի այցելեցին եւ Սուրբ Ծննդյան տոնական Պատարագին ներկա գտնվեցին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարար Պաատա Զաքարեիշվիլին, կրոնական հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշախմաձեն, Վրաստանի խորհրդարանի անդամներ Սերգո Ռատիանին եւ Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակին կից հանդուրժողականության կենտրոնի ղեկավար Բեքա Մինդիաշվիլին, Վրաստանում Հայաստանի դեսպանի տեղակալ Վահագն Աֆյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, պետական, հասարակական գործիչներ:

Հընթացս Սուրբ Պատարագի Վիրահայոց թեմի առաջնորդն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՐԹ-ԲՈՂՈՔ

ՓԱՐԻԶ. ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՐԹ՝ Ի ՆՇԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԻ

Ի ԹԻՎՍ 40 ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՐԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ

Ֆրանսիայում ահաբեկչական հարձակումների արդյունքում, հունվարի 7-9-ին, մահացել է 17 մարդ. Charlie Hebdo ամսագրի 10 աշխատակից, իրեական խանութի 4 պատանդները եւ 3 ոստիկան:

Հունվարի 7-ի առավոտյան Charlie Hebdo-ի խմբագրության վրա կատարված հարձակման հետեւաքնով տասներկու մարդ է մահացել, այդ թվում՝ 10 լրագրող եւ երկու ոստիկան, եւս 11 մարդ վիրավորվել է:

Ահաբեկիչներին հաջողվել էր փախուստի դիմել եւ թաքնվել, բայց նրանք այնուհետեւ ոչնչացվել են: Այս ահաբեկչությունը զոհերի թվով ամենամեծն է Ֆրանսիայի պատմության վերջին հիսուն տարում:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Սիրելի՛ հայորդիներ.

Ամանորի եւ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության տոների առիթով Հայրապետական Մեր օրհնությունը եւ շնորհավորանքներն ենք բերում տիրախնամ Վիրահայոց թեմի ուխտապահ եկեղեցականաց դասին, թեմական եւ համայնքային վարչությանց պատվարժան անդամներին եւ հավատավոր մեր զավակներին:

Այսօր ամենքս, որպես ուխտավոր բեթղեհեմյան մսուրում խանձարուրով պատված նորածին Փրկչի, ձայ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Վիրահայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Վազգեն եպիսկոպոս Միրզաեանյանին.

Ձերդ Սրբություն

Այսօր աշխարհին կրկին հավաստվեց Աստծո մարմնավորման մեծ հրաշքը: Սույն ավետիսով ի սրտե շնորհավորում եմ Քրիստոսի Սուրբ Ծննդի եւ նոր՝ 2015 թվականի առթիվ:

Ձեզ եւ ձեր երկրին մաղթում եմ խաղաղություն, ուրախություն եւ Աստծո հովանը:

Հարգանքներով՝ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Երանաշնորհ եւ Սրբազնագույն

Սիրելի՛ հայորդիներ.

Շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան նվիրական տոների առիթով: Մաղթում քաջառողջություն ու արեւշատ տարիներ, գործերի հաջողություն եւ ընտանեկան խաղաղ ու երջանիկ օրեր:

Անցնող 2014 թվականը եղավ Վրաստանի հավատացյալ հայության համար հաջողությունների ու վերելքի տարի. ընդառաջ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ հիշատակի խաչքարեր տեղադրվեցին Թբիլիսիում, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղում, Նինոծմինդա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

Բարեկամներ, այսօր ճանապարհելով հին՝ 2014-ը եւ դիմավորելով նոր՝ 2015 թվականը, իմ բարեմաղթանքներն եմ հղում ձեզ: Ամենայն բարիք ու հաջողություն ձեզ, թանկագի՛ն բարեկամներ:

Սիրելի նիոնծմինդացիներ, այս տոնական օրը չէի ցանկանա ձեր ուշադրությունը գրավել շրջանում կատարած եւ կատարելիք գործերի հաշվետվությամբ, միայն կցանկանայի վստահեցնել, որ հնարավորինս արվում եւ առաջիկայում էլ կարվի ձեզ հուզող հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ: Իսկ այսօր, ես ուղղակի ցանկանում եմ ձեզ ջերմորեն շնորհավորել Նոր տարվա ու Սուրբ Ծննդի առթիվ, մաղթել բարիք, երջանկություն, առողջություն եւ, ամենակարեւորը, հավատ, որ վաղը կլինի շատ ավելի լավ, քան այսօր է: Հենց այս հավատով եմ շնորհավորում ձեր Նոր տարին:

ԳԱԳԻԿ ԿԱՐՍԼՅԱՆ
Նիոնծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ

Նոր տարին ներս մտավ մեր շեմերից: Տոնական օրերին մենք մեկ առ մեկ վերհիշում ենք անցած տարվա օրերը՝ երբեմն ուրախությամբ, երբեմն դառնությամբ, սակայն Նոր տարուց միշտ ուրախ պահեր կակնկալենք: Այսպիսին է բնության դրվածքը, այսպիսին է մարդ արարածի խառնվածքը: Ու ես էլ որպես մարդ, որպես բնիկ սխվիլիսցի, բնության այս մշտակա օրենքին ենթարկվելով, ուզում եմ, որ Նոր տարին՝ 2015 թվականը, միայն լավը բերի եւ հույսերս շատ են կապված բոլորիդ հետ, իմ սիրելի՛ համագյուղացիներ, որովհետեւ լավ գիտեմ ձեր ուժի ու սիրո գաղտնիքը, ձեր կարողությունների սահմանները, ձեր նվիրումը մեր երկրին ու մեր ազգին:

Երջանիկ Նոր տարի եմ մաղթում բոլորիդ, հարատեւություն ձեր օջախներին, մեր ազգին, մեր երկրին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ
Ախալցիխեի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր

Սիրելի՛ բարեկամներ.

Շնորհավոր ձեր Նոր տարին ու Սուրբ Ծնունդը: Ամենայն բարիք, երջանկություն, հաջողություն, առաջընթաց ձեզ ու ձեր ընտանիքներին: Տա Աստված, որ 2015-ը ձեզանից յուրաքանչյուրի համար նշանավորվի որպես արտակարգ հաջողությունների տարի:

Առանձնակի կցանկանայի դիմել իմ համերկրացիներին, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղի մարդկանց: Սիրելիներս, ի սրտե շնորհավորում եմ ձեր Ամանորը, մաղթում, որ 2015-ին կարգավորվեն ձեզ հուզող բոլոր հիմնախնդիրները, որ սերն ու բարօրությունը մշտապես թեւածի ձեր ընտանիքներում, որ լիարյուն կարողանաք վայելել ձեր աշխատանքի, ձեր գործադրած ջանքերի պտուղները:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ, բարեկամնե՛ր:

ՆԵԼԼԻ ԴՈՒԴՈՒԿՉՅԱՆ
Ասպինձայի շրջանի Դամալա գյուղի հանրային դպրոցի տնօրեն

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նակից ենք երկնաէջ հրեշտակներին եւ հոգու խնդությամբ ավետում ենք աստվածորդու աշխարհագալուստը. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզ եւ Մեզ մեծ աւետիս»:

Տիրոջ Սուրբ Ծննդյամբ բացվող փրկչական 2015 թվականը նվիրական է համազգային մեր կյանքում: Ազգովի պիտի ոգեկոչենք Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցը եւ հոգենորոգություն պիտի ապրենք՝ կատարելով սրբադասումը վասն հավատո եւ վասն հայրենյաց նահատակված Ցեղասպանության անմեղ զոհերի:

Բյուրավոր նահատակների հիշատակի առջեւ խոնարհումով նորոգենք առ Աստված համազգային հավատարմության մեր ուխտը, որպեսզի համախմբված Հայրենիքի եւ Մայր Եկեղեցու շուրջ, շարունակենք առաջընթաց արձանագրել՝ հանուն աշխարհասփյուռ մեր զավակների բարօրության, մեր երկրի զորացման, Արցախ աշխարհի ազատ եւ անվտանգ կյանքի անխաթար պահպանման եւ մեր արդար դատի պաշտպանության:

Քրիստոսի մարդեղության մեծ ու սքանչելի տոնին ընդառաջ՝ Միածնաէջ Մայր Տաճարից Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով, որ Փրկիչը առատորեն հեղի սիրո եւ համերաշխության շնորհները մարդկանց հոգիներին, եւ Իր երկնառաք խաղաղությունը հաստատի համայն աշխարհում:

Թող ամենախնամ Տերը Սուրբ Ծննդյան շնոհներով զորավիգ լինի Տիրախնամ Վիրահայոց թեմի թեմական ու համայնքային վարչությանց անդամներին եւ հոգեւոր դասին՝ պարգեւելով քաջառողջություն եւ նախանձախնդիր ծառայության բյուր հաջողություններ ի մխիթարություն աշխարհասփյուռ քրիստոսասեր մեր ժողովրդի եւ ի պայծառություն առաքելաշավիղ մեր Սուրբ Եկեղեցու:

ՔՐԻՍՈՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ
ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ
Սիրո ողջույնով եւ օրհնությամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յի շրջանի Մամզարա գյուղում եւ հուշարձան՝ Նիոնծմինդա քաղաքում, կազմակերպվեցին հիշատակի բազմաթիվ միջոցառումներ: Վիրահայությունը Մայր Հայրենիքի հետ նշեց Մայիսյան հաղթանակների, Անկախության, Հայոց գրերի գյուտի տոները, շքեղորեն նշվեցին Սայաթ-Նովյան Վարդատոնի 100-ամյակը, արդեն ավանդական դարձած Տերյանական, Չիվանու, Հավասու, Աղայանական, Հովսեփյանական օրերը: Մեր համայնքը մասնակցեց համահայկական տարբեր փառատոների եւ ծրագրերի: Ուխտագնացությունների միջոցով վրացահայությունը հաղորդակից դարձավ Հայաստան աշխարհի եւ Արցախի տեսարժան վայրերին, գործուն մասնակցություն ունեցավ Վրաստան երկրի, Թբիլիսիի բազմաբնույթ ծրագրերին եւ միջոցառումներին: Ընթացիկ տարում կրթա-մշակութային եւ երիտասարդական կենտրոններ ու հասարակական կազմակերպություններ հիմնադրվեցին եւ արդյունավետ մասնակցություն եղավ համայնքային կյանքում: Պահպանվեց մշակութային միջավայրը, եւ վրացահայությունը ըմբոշխնեց իր մեծերի արարումները թատերական, դասական երաժշտության, ազգագրական երգի ու պարի, գրականության եւ արվեստի բնագավառներում: Շարունակվեց եկեղեցաշինությունը ինչպես Ջավախքում, այնպես էլ Թբիլիսիում: Եվ այս ամենը Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի օրհնությամբ եւ քաջալերանքով, մեր բարերարների ազնիվ նվիրատվություններով, գործընկերների աջակցություններով եւ, ամենակարեւորը՝ հավատացյալ մեր ժողովրդի, հոգեւոր դասի, թեմի պաշտոնեության եւ համայնքային գործիչների անմնացորդ աշխատանքներով:

Վրացահայությունը մեծ ուրախությամբ Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում եւ «Հայարտուն» կենտրոնում հյուրընկալեց Վրաստան ժամանած Մայր Հայրենիքի բարձրաստիճան պաշտոնյաներ՝ Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Սերժ Սարգսյանին, ՀՀ Ազգային ժողովի նախագահ պարոն Գալուստ Սահակյանին եւ ՀՀ վարչապետ պարոն Հովիկ Աբրահամյանին: Կարեւոր էին նաեւ մեր հանդիպումները Վրաստանի նախագահ պարոն Գիորգի Մարգվելաշվիլու եւ վարչապետ պարոն Իրակլի Ղարիբաշվիլու հետ, որտեղ բարձր մակարդակով քննարկվեցին վրացահայությանը հուզող հարցեր: Շարունակվեցին եղբայրական հարաբերությունները Վրաց Ուղղափառ եկեղեցու հետ:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ, գալիք 2015 թվականը Մայր Հայրենիք Հայաստանի, Արցախի եւ աշխարհասփյուռ հայության համար առանցքային նշանակություն ունի: Հայրենազրկված եւ ցեղասպանված հայությունը առավել համախմբված, հետեւողական եւ պատասխանատու պիտի լինի համազգային նպատակների, արդարության եւ հատուցման համար արվող քայլերում: Հավատում ենք հայության հաղթական ներկային եւ վաղվա լուսավոր ապագային: Մենք առաքելություն ունենք աշխարհում եւ դեռեւս չիրականացված նպատակներ: Թող Բեթղեհեմի Սուրբ Մսուրում մարդացած Աստված օրհնի քրիստոսասեր եւ հայրենանվեր մեր ժողովրդին, խաղաղ պահի հայոց եւ վրաց երկինքը, ջերմացնի հայերի եւ վրացիների հազարամյակների բարեկամությունը, ամրացնի Հայ Առաքելական եւ Վրաց Ուղղափառ եկեղեցիների քրիստոնեական համագործակցությունը ի փառս հավատացյալների հոգեւոր ուրախության եւ ընտանեկան երջանկության:

Քրիստոս ծնվեց եւ հայտնվեց, մեզ եւ ձեզ մեծ ավետիս:

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Վիրահայոց թեմի առաջնորդ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՅՐԵՐԸ ՎԻՐԱՀԱՅԵՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ված Սուրբ Ծննդի եւ Աստվածահայտնության տոնի առթիվ շնորհավորագրում նշում է, որ վրացիներն ու հայերը համատեղ անցել են բազմում փորձությունների միջով, հաղթանակել եւ մեր բազմադարյա եղբայրությունն ու բարեկամությունն անխախտ է: «Վրաստանի մեր հայ համերկրացիներին շնորհավորում եմ այս պայծառ տոնի առթիվ: Համոզված եմ, որ առաջիկայում մենք համատեղ կշարունակենք աշխատել ի բարօրություն մեր հայրենիքի»,- նշված է վարչապետի ուղերձում:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Սուրբ Պատարագի վերջում Թեմական առաջնորդի հանդիսապետությամբ կատարվեց Ձրօրհնեքի արարողություն եւ Եկեղեցու Խաչի կնքահայր վերստին դարձավ արժանավոր հայորդի, հավատավոր քրիստոնյա Յուրի Երեմյանը:

Հավարտ Պատարագի Վիրահայոց թեմի առաջնորդը շնորհակալության խոսքեր ուղղեց վրացական պետության եւ կառավարության ներկայացուցիչներին՝ Սուրբ Ծննդյան տոնի առիթով հայոց եկեղեցու հավատացյալներին շնորհավորելու կապակցությամբ:

Այնուհետեւ հավաքվածներին Սուրբ Ծննդի, Աստվածահայտնության եւ Ձրօրհնեքի կապակցությամբ շնորհավորանքի խոսքերով դիմեցին Վրաստանի հաշտության եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին եւ Վրաստանի կրոնական հարցերով պետական գործակալության նախագահ Ջազա Վաշախմաձեն, փոխանցեցին Վրաստանի վարչապետի շնորհավորանքները: Հայրենակիցներին բարեմաղթանքի խոսքեր հղեց խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանը:

Տոնական Սուրբ Պատարագից հետո երկրի պետական այրերը Վիրահայոց թեմի առաջնորդի հետ միասին ներկա գտնվեցին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում Վրաստանի Հայ կանանց «Շուշանիկ» միության (նախագահ՝ Սուսաննա Խաչատրյան) կազմակերպած ավանդական հայկական գաթայի փառատոնին:

Փառատոնն անցավ կենտրոնի ստեղծագործական խմբերի եւ անհատ կատարողների ուժերով կազմակերպված համերգի ներքո:

Հունվարի 6-ի Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքիի Սուրբ Խաչ եկեղեցում, առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանի հանդիսապետությամբ մատուցված տոնական Սուրբ Պատարագին մասնակցեց Ախալքալաքիի շրջանային ժողովի փոխնախագահ Նաիրի Իրիցյանը:

Իսկ Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցի այցելեցին եւ հավատացյալներին Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ շնորհավորեցին Աջարիայի Ինքնավար Հանրապետության վարչապետ Արչիլ Խաբաձեն եւ Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովը:

Թանկագի՛ն բարեկամներ, սիրելի՛ գործընկերներ.

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդի տոնի առթիվ: Մաղթում եմ ձեզ հաջողություն, քաջառողջություն եւ առաջընթաց:

Սիրելի մանկավարժներ, այս տոնական օրը սրտագին մաղթանքներով ցանկանում եմ դիմել ձեզ: Թանկագին բարեկամներ, հաջողություն ձեզ 2015 թվականին ձեր ազգապահպան, մեր երեխաներին հայացի դաստիարակության վեհ գործում: Երջանկություն, բարիք ու նպատակների կատարում ձեզ ու ձեր ընտանիքներին:

Շնորհավոր Նոր տարի, բարեկամներ:

ՆԱՐՅԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ախալքալաքիի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի պետ

Թանկագի՛ն բարեկամներ, սիրելի՛ «Վրաստանցիներ».

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդի պայծառ տոնի առթիվ: Թող 2015-ին հաջողություններն ու առաջընթացը ձեզ ուղեկից լինեն ձեր ազգանվեր գործունեությունում:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ իմ ամանորյա մաղթանքները հղել հայրենակիցներիս, Բոլնիս-Խաչենի բնակիչներին:

Սիրելի՛ բարեկամներ, Նոր տարին նոր ծրագրերի, նոր պլանների, երազանքների կանխագծման պահն է, եւ ես անկեղծորեն ցանկանում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրի համար 2015-ը դառնա նույնիսկ ամենանվիրական երազանքի, անհասանելի, երեւակայական թվացող ծրագրի կատարման տարի:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

ԼԵՎՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Բոլնիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամ



Թանկագի՛ն բարեկամներ.

Անչափ ուրախ եմ «Վրաստան» թերթի միջոցով ձեզ իմ ամանորյա մաղթանքները հղելու ընձեռված հնարավորության համար: Երջանկություն, առողջություն, առաջընթաց, բազմացում ձեզ ու ձեր ընտանիքներին: Թող 2015 թվականը ձեզանից յուրաքանչյուրի համար նշանավորվի որպես հաջողությունների, նվիրական նպատակներին հասնելու բացառիկ տարի:

Օգտվելով առիթից, կցանկանայի իմ անկեղծ շնորհավորանքները հղել մեր շահումյանցիներին:

Թանկագի՛ն բարեկամներ, շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա ու Սուրբ Ծննդի առթիվ: Տա Աստված, որ 2015-ին ձեզանից յուրաքանչյուրի իղձերն իրականացվեն, ձեզ հուզող խնդիրները կարգավորվեն, հեռվում գտնվող հարազատները մերձենան, ընտանիքները միավորվեն...

Շնորհավո՛ր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

ԱՐՏՅՈՒՇ ՈՒՌՈՒՄՅԱՆ
Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանի հանրային դպրոցի տնօրեն

ԵՐԹ-ԲՈՂՈՔ

ՓԱՐԻԶ. ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՐԹ՝ Ի ՆՇԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հունվարի 11-ին Փարիզում, Ֆրանսիայի մյուս քաղաքներում անցկացվեց միասնության երթ՝ ի նշան բողոքի, Փարիզում, Ֆրանսիայի մյուս քաղաքներում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններին: Հունվարի 7-9-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողությունների զոհերի հիշատակին եւ ֆրանսիական ժողովրդին համերաշխության արտահայտման նշանաբանով անցկացված երթին մասնակցում էին աշխարհի ավելի քան 40 երկրների ղեկավարներ, հասարակական-քաղաքական գործիչներ, տարբեր դավանանքների հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ:

Երթին մասնակցեցին նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

ՎՐԱՍՏԱՆ-ԷՍՏՈՆԻԱ

ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 12-13-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Էստոնիայի վարչապետ Տաավի Ռիիվասը:

Այցի շրջանակներում՝ Էստոնիայի կառավարության ղեկավարի հետ հանդիպեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Այցի շրջանակներում Վրաստանի պետգրասենյակում անցկացվեցին վրաց-էստոնական կառավարական պատվիրակությունների բանակցությունները, որից հետո ստորագրվեցին միջազգային բեռնափոխադրումների վերաբերյալ համաձայնագրեր:

Էստոնիայի վարչապետի Վրաստան կատարած այցի շրջանակներում, Թբիլիսիում անցկացվեց վրաց-էստոնական բիզնես-ֆորում, որի աշխատանքին մասնակցեցին երկու երկրների վարչապետերը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՄԵՆՔ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՀԱՋՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԸ ԼԻՆԵՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ»

Վրաստանի ֆինանսների նախարարության հայտարարությամբ, 2014 թվականին պետբյուջեի մուտքերը նախնական տվյալներով, կազմել են՝ 9118,5 միլիոն լարի, ինչը կազմում է ծրագրվածի 101,1 տոկոսը:

Նախարարության տվյալներով, տարեկան առաջադրանքը գերակատարվել է 13,5 միլիոն լարիով: Ինչ վերաբերում է հարկային մուտքերին, ապա նախարարության տվյալներով, առաջադրանքը գերազանցվել է 26,9 միլիոն լարիով:

Մեկնաբանելով վերոնշյալ տվյալները, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ 2015 թվականն առավել հաջողակ կլինի մասնավոր գործարարության համար: «2015 թվականը եւ մյուս տարիները կդառնան մեր նախընտրական խոստումների կատարման տարի: Կենսաթոշակը կլինի կենսական նվազագույնից բարձր, էկոնոմիկան կշարունակի իր աճը եւ, ամենագլխավորը, հիմնական մարտահրավերը կլինի այն, որ էկոնոմիկայի զարգացման գործում առաջատարը կդառնա մասնավոր հատվածը»,- հայտարարեց նախարարը: «Հարկ է նշել, որ 2014 թվականը բացառիկ էր: Բյուջեն լրիվությամբ կատարվեց: Մենք բյուջեում փոփոխություններ չենք կատարել եւ, անկախ դրանից, դրա բոլոր պարամետրերը կատարվեցին»,- նշեց Նոդար Խադուրին:

Նրա հավաստմամբ, հնարավոր ամեն ինչ կարվի, որպեսզի հաջորդ տարիները լինեն առավել արդյունավետ:

ՏԱՐԵՐՔ

ԱՌԱՏ ՃՆԱՏԵՂՈՒՄՆԵՐԸ ԼՈՒՐՋ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ՍՏԵՂԾՈՒՄ

Հունվարի 7-8-ին ծնատեղումները լուրջ հիմնախնդիրներ էին ստեղծել Վրաստանի բարձրալեռ շրջաններում եւ հատկապես Հայաստան ու Ռուսաստան տանող ճանապարհներին: Մասնավորապես, ավտոտրանսպորտի երթեւեկությունը ժամանակավորապես դադարեցվեց Ռուսաստանի հետ կապող Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս (ռազմավիրական) եւ Հայաստանի հետ կապող Նինոծմինդա-Հայաստանի սահման ճանապարհահատվածներում:

Նինոծմինդայի շրջանում փրկարարներն ու ոստիկանները ձնե թակարդից ազատել են մոտ 300 մեքենա: Մոլեգնած տարերքի պայմաններում երթեւեկության ապահովման նպատակով, շրջանում ստեղծվել էր արտակարգ շտաբ, որը գլխավորում էր Նինոծմինդայի շրջանից Վրաստանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը: Մենք հեռախոսով կապվեցինք նրա հետ:

- Արտակարգ ծանր պայմաններում Վրաստան-Հայաստան սահմանագծում ավտոմեքենաների երթեւեկության ապահովման նպատակով մոբիլիզացվել էին Ախալքալաքիի, Ասպինձայի, Նինոծմինդայի, ընդհանրապես Սամցխե-Ջավախեթիի փրկարար բոլոր ջոկատները, տեխնիկական միջոցներ էին ստացվել Թբիլիսիից,- հեռախոսազրույցում ասաց Հ.Մկոյանը եւ հավելեց.- Մաքրման եւ փրկարար աշխատանքները, չնայած տեղացող ձյան ու ձնաբքին, երբ տեսանելիությունը խիստ սահմանափակ էր, իսկ սառնամանիքը հասնում էր 15-20 աստիճանի, անընդմեջ շարունակվում էին: Նշեմ, որ թեպետ մենք սովոր ենք խիստ ձմռանը, սակայն նման փոթորկալից քամի ճանապարհի մաքրման աշխատանքներով զբաղված մեխանիզատորների խոսքերով, 20 տարուց ավելի չի եղել: Նման պայմաններում երթեւեկության ապահովման համար մենք կազմեցինք մեքենաների շարասյուներ, այդ ձեւով էինք կարողանում իրականացնել անխափան երթեւեկությունը,- ասաց պատգամավորը եւ ավելացրեց.- Այս երկու օրվա ընթացքում սահմանից, ձյունամաքրիչ մեքենաների միջոցով 50-60 ավտոմեքենաներից բաղկացած շարասյունը կարողացանք հասցնել Նինոծմինդա, իսկ հետո, գրեթե նույն քանակության մեքենաների, կրկին ձյունամաքրիչ մեքանաների ուղեկցությամբ հասցնում Հայաստանի սահման: Առօրյա կատարվում էին 10-ից ավելի նման «ռեյսեր»: Առանձնակի շնորհակալություն պետք է հայտնեմ փրկարարներին, ոստիկաններին, մոտակա գյուղերի բնակիչներին: Ցավոք, չկարողացանք խուսափել զոհերից: Մասնավորապես, հունվարի 8-ին Նինոծմինդա-Օռլովկա ճանապարհի մոտակայքում գտանք Նինոծմինդայի շրջանի Արագյալ գյուղի բնակիչ 54-ամյա Վազգեն Գինոսյանի դիակը: Նա ձյան մեջ խրված մեքենայից դուրս էր եկել եւ փորձել էր հետիոտն հասնել գյուղ,- հեռախոսազրույցում նշեց պատգամավորը:

Նրա խոսքերով, հաջորդ օրը տեղի էր ունեցել արտակարգ դեպք՝ մեքենայի մեջ սկսվել էին Գորելովկայի բնակչուհի Անուշ Իսպիրյան-Սորոգոլյանի երկունքի ցավերը: «Անուշը ծննդաբերեց մեքենայում եւ շտապ կարգով նրան տեղափոխեցինք Նինոծմինդա, ապա Թբիլիսի: Այսօր ուրախությամբ տեղեկացանք, որ մայրն ու նորածինը իրենց լավ են զգում»,- ասաց Հենզել Մկոյանը:

Պատգամավորի խոսքերով, ճանապարհահատվածի առանձին տեղամասերում մարդիկ բողոքում էին, իբր պարեկային ոստիկանությունը արգելակում էր ավտոտրանսպորտի շարժումը: «Նման ոչինչ չկար, ուղղակի անհարկի խցանումները կանխելու նպատակով, ինչպես ասացի, ստեղծվում էին ավտոշարասյուներ: Բոլոր վարորդներին կոչ էինք անում ընկալումով մոտենան ստեղծված իրավիճակին եւ անվերապահորեն կատարեն՝ ինչպես պարեկային ոստիկանության, այնպես էլ մաքրման աշխատանքներ իրականացնող ծառայությունների պահանջները»,- ընդգծեց Հենզել Մկոյանը:

Նրա խոսքերով, արտակարգ շտաբը, ինչպես ճանապարհին, այնպես էլ բնակավայրերում, ստեղծել էր տաքանալու եւ սնվելու կետեր, որտեղ ճանապարհին մնացած ուղեւորները կարող էին ապաստարան գտնել:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ՊԱՀՊԱՆԵՆՔ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԵՆՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՈՂ «ՔԱՇԿԱՆ»

Շատ հին ժամանակներից շահումյանցիները (Շահումյան ավան, Մառնեուլիի շրջան) սովորույթ ունեն՝ դեկտեմբերի առաջին շաբաթվա ուրբաթ երեկոյան, տավարի մսի եւ ձավարի կերակրատեսակը պղնձե կաթսաներով վառած թոնրի կրակին դնել ու եփել ամբողջ գիշեր:

Թոնրի մեջ դնողին յուրաքանչյուր կաթսայատեր մի զույգ չուչխել է նվիրում: Այդ կերակրատեսակը կոչվում է «քաշկա», իսկ շաբաթ օրը, երբ ուտվում է «քաշկան», կոչվում է՝ «Քաղցր պառավի օր»: Այդ օրը քաշկայի հետ միասին սեղանին է դրվում քաղցրեղեն, մրգեղեն: Սեղանակիցները, իրար քաղցրեղեն հյուրասիրելով, մեկը մյուսին մաղթում են՝ «քաղցր պառավես»:

Թոնրի միջից պղինձը հանողին ասել են՝ «քաշի գա», այսինքն՝ «պղինձը թոնրից դուրս քաշի», այստեղից էլ՝ «քաշգա» կամ «քաշկա» անվանումը, որտեղ գ-ն հնչյունափոխվել է՝ կ-ը:

Թանկագին հայրենակիցներ, լավ կլիներ այս սովորույթը տարածվեր մեզանում, որովհետեւ նա ընտանիքին բերում է համերաշխություն ու շենություն:

ՇՈՒՇԱՆ ԹԱՌԱՆՅԱՆ
Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանի թիվ 1 հայկական դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի

ՊԱՏԱՀԱՐ

ՀՐԴԵՀ ՄԵԼԻՔ-ԱԶԱՐՅԱՆՑԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ

Լույս հունվարի 13-ի գիշերը այրվել է Թբիլիսիի Ռուսթավելի պողոտայի թիվ 37 հասցեով գտնվող ամենագեղեցիկ պատմական շենքերից մեկի մի մասը, շենք, որը կրում է դրա ստեղծողի՝ թբիլիսցի վաճառական Ալեքսանդր Մելիք-Ազարյանցի անունը: Շենքը կառուցվել է 1912-1915 թվականներին պետերբուրգցի ճարտարապետ Նիկոլայ Օբոլենսկու նախագծով:

Հրդեհի հետեւանքով այրվել է 5-հարկանի շենքի առաջին հարկը: Այրվել են վերելակի հորանը եւ տանիքը, ընդհանուր առմամբ, մոտավորապես 250-300 քառակուսի մետր տարածք: Տեղում աշխատել է 16 հրշեջ բրիգադ:

Շենքի արեւելյան կողաշենքի առաջին հարկում գործում էին մի քանի խանութներ, իսկ գիշերները բակում ապաստանում էին մի քանի անօթեւաններ: Միջադեպի հետեւանքով ոչ ոք չի տուժել: Հրդեհի ժամանակ շենքում եղել է մեկ ընտանիք, որը ժամանակին տարհանվել է: Մինչդեռ զգալի վնաս է պատճառվել շենքի առաջին հարկում գտնվող առեւտրային օբյեկտներին: Հրդեհի ստույգ պատճառներն առայժմ հայտնի չեն: Վարկածներից մեկի համաձայն՝ հրդեհը բռնկվել է անօթեւանների կողմից վառած կրակից: Կատարվում է հետաքննություն:

Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոն եւ վարչության «Շեն Ջորջիա» ընկերությունը եւ «Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում են Շալվա եւ Ջուբո Լոմսաձեներին, սիրելի մոր եւ կնոջ՝

ԼԱՄԱՐԱ ՎԱՍԻԼԻ ԼՈՄՍԱՁԵԻ

մահվան կապակցությամբ:

ՀԱՅ-ՎՐԱՑ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

ԷԼԶԱ ԿԱԿՈՒԼԻԱ. «ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԲԵՔ ԱՎԱՐՏ ՉԻ ՈՒՆԵՆԱ»

Էլզա Կակուլիայի մասին «Վրաստան» թերթում գրվեց դեռ 2011 թվականի նոյեմբերին: Այդ օրերին մեկնարկել էր ազգային փոքրամասնություններին ուղղված «Վրաց լեզուն՝ ապագա հաջողության գրավական» երկամյա ծրագիրը եւ լինելով 150 մասնակիցներից մեկը, Էլզան՝ որպես վրաց լեզվի մասնագետ, արդեն մեկնել էր Նինոծմինդայի շրջանի Օռլովկա հայաբնակ գյուղ: Եռանդով, համբերությամբ ու գիտելիքներով զինված Թբիլիսիում գործող Սուխումիի պետական համալսարանի վրացական բանասիրության մագիստրատուրայի ուսանողը համոզված էր, որ կանի ամեն ինչ աշակերտության ու տեղի բնակչության մեջ վրաց լեզվի ու վրացիների, Վրաստանի հանդեպ առավել մեծ հետաքրքրություն ու սեր առաջացնելու համար: Գյուղի պայմաններն ու սաստիկ ծմեռը նրան բնավ չէին հիասթափեցնում, ասում էր, որ ջերմանում է իր աշակերտների ուսումնատենչությամբ ու նաեւ դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհու ընտանիքի անդամների սիրով, որ հյուրընկալել ու ապաստան էր տվել նրան:

Այս օրերին, «Վրաստանի» խմբագրություն նամակ եկավ: Հեղինակը Էլզա Կակուլիան էր. գրում էր, որ ծրագիրը վաղուց արդեն ավարտվել է, ու ինքն այժմ շարունակում է իր ուսումը վրացական լեզվագիտության գծով: Բայց տպավորությունները, որոնք թողել էին նինոծմինդացիները, եւ ովքեր նրա մեջ հետաքրքրություն էին արթնացրել հայ ժողովրդի հանդեպ, շարունակվում է ապրել:

«Վրաստան» թերթի միջոցով,- գրված է նամակում,- Ուզում եմ արտահայտել ոչ միայն կարծիքս օռլովկացիների ու ողջ վրացահայերի ու այսօր նաեւ Հայաստանի մասին, այլեւ՝ դիմել հե'նց երիտասարդներին՝ հայ-վրաց բարեկամությունն է'լ ավելի ամուր պահելու կոչով, քանի որ մեր օրերում, նման կապերը առավել հաճախակի են հնչեցվում պաշտոնական պատվիրակությունների հանդիպումների ժամանակ: Համոզված եմ, որ վրաց ու հայ ժողովուրդների բարեկամությունը, որը գալիս է դարերի խորքից, երբեք ավարտ չի ունենա»:

«Ինքս ծնվել եմ Արեւմտյան Վրաստանի Սամեգրելո երկրամասի Աբաշայի շրջանում: Ապա ընտանիքով տեղափոխվել ենք Թբիլիսի: Ստանալով վրացական բանասիրության բակալավրի աստիճան՝ մայրաքաղաքում գործող Սուխումիի պետական համալսարանում: Այժմ շարունակում եմ ուսումս մագիստրատուրայում, իսկ մինչ ծրագրին մասնակցելը, ես ընդհանրապես չէի շփվել հայերի հետ, գրեթե ոչինչ չգիտեի այդ ազգի պատմության ու մշակույթի մասին: Հայերի հետ իմ մտերմությունն ու բարեկամությունն սկսվեց 2011-ից, երբ մասնակիցը դարձա «Վրաց լեզուն՝ ապագա հաջողության գրավական» ծրագրի եւ ճակատագրի բերումով մեկնեցի Նինոծմինդայի շրջանի Օռլովկա հեռավոր գյուղ, ուր ապրում են մեկ ռուս եւ հինգ աջար ընտանիքներ, բնակչության մնացած մասը հայեր են:

«Խոստովանում եմ, որ վախենում էի: Ու ոչ միայն ես, այլեւ ծրագրի ղեկավարությունը: Հնարավոր էր չէ՞, որ ինչ-որ բան չստացվեր, չարդարացվեր... բարեբախտաբար, ծրագրի ընթացքն արդարացրեց նպատակը, ու հաջողության պտուղները մենք քաղում ենք առ այսօր»:

«Օռլովկայում աշխատեցի երկու տարի: Որպես Վրաց լեզու դասավանդող էթնիկ հայ մանկավարժի օգնական՝ 1-7 (ըստ ծրագրի), երբեմն նաեւ բարձր դասարաններում ու առավել հաճախ մանկավարժների ու նույնիսկ գյուղի բնակչության շրջանում՝ ըստ ցանկության:

Իմ ներդրումն հենց այդ մարդիկ են, այդ աշակերտները, ում թողել եմ գյուղում եւ, ովքեր այսօր առավել հստակ են խոսում վրացերեն, առավել քաջատեղյակ են մեր ընդհանուր երկրի Վրաստանի մասին ու առավել շատ են սիրում այն: Սիրեցի բոլորին, անխտիր: Նրանց հետ, նրանց օջախներում երկու տարի ապրել եմ, կիսել երջանկություն ու դժբախտություն, նրանք այն մարդիկ են, ովքեր ամեն ինչում սատարել են ինձ: Հիանալի բարեկամական կապեր եմ հաստատել նրանց հետ, խորապես հարգում ու շատ եմ սիրում նրանցից յուրաքանչյուրին: Հպարտ եմ, որ լավագույն տնօրենի հետ եմ աշխատել: Ընդամենը մեկ շաբաթ առաջ հյուրընկալվել էի նրանց: Այնքա՜ն էինք ուրախացել....

«Զավեշտալին այն է,- գրված է նամակում,- որ եթե ես նրանց վրացերեն, ապա իրենք ինձ հայերեն էին սովորեցնում: Երկու տարի անց, ես արդեն հասկանում էի, թե ինչ թեմայի շուրջ էին խոսում ուսուցչանոցում, իսկ երբ աշակերտը հայերեն էր թարգմանում վրացերեն տեքստը, միանգամից գտնում էի սխալը: Իսկ վերադարձից առաջ մանկավարժները «ստիպեցին» նույնիսկ հայոց լեզվի քննություն հանձնել, եւ ես «ստիպված էի» վրացերենի դասագրքում եղած բառերը թարգմանել հայերեն, պատկերացրեք հի'նգ էլ ստացա, մանավանդ, որ հայերենով ընթերցեցի նաեւ:

«Պարզ է, որ այսքանից հետո, ես անպայման պիտի այցելեի նաեւ Հայաստան: Վրացի մի խումբ ընկերներով եղանք մի քանի քաղաքներում: Առաջնահերթորեն այցելեցինք Օշական, տեսանք Մեսրոպ Մաշտոցի շիրիմը, եկեղեցին, բակում տեղադրված քարե տառերը հայոց այբուբենի... ապա եղանք նաեւ Էջմիածնում, Գառնիում, Գեղարդում, ուր վեր խոյացող այդ չքնաղ եկեղեցին տեսանք, որն ինձ վրա անկրկնելի տպավորություն թողեց: Իսկ երեկոյան եկանք Երեւան, անցանք նրա կենտրոնական փողոցներով ու երկար զմայլվեցինք երգող շատրվաններով, որոնք իրենց դյութիչ երգ ու պարով անջնջելի հետք թողեցին բոլորիս հոգիներում: Ես իմ շրջապատին, ում հետ շփվում եմ, եւ ովքեր քիչ գիտեն հայերի մասին, մեծ սիրով նրանց բոլորին պատմում եմ Հայաստանի ու ընդհանրապես հայերի մասին, ում հետ իմ բարեկամությունն այլեւս ավարտ չունի»:

«Նամակն այս,- գրված էր ավարտին,- Ամանորի նախաշեմին եմ ուղարկում: Ուստի մեծ է ցանկությունս այս կերպ եւս շնորհավորել իմ սիրելի օռլովկացիներին, նինոծմինդացիներին, «Վրաստան» թերթի բոլոր ընթերցողներին ու նաեւ ձե'զ, իմ սիրելի համերկրացի հայեր: Ձեզ ու վրացի երիտասարդությանը ձեռքբերումների ու վերելքների տարի եմ մաղթում, միմյանց միջեւ հաստատվող միայն լավագույն կապերով փայլենք: Եվ իբրեւ կարգախոս որդեգրենք այն, որ միայն միասին կարող ենք հզորացնել մեր եկիրը»:

ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ - 91

ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԿՈԼԱԺՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿՅԱՆՔԸ



Նորաստեղծ «Վիրահայերի միության» նախաձեռնությամբ, Վրաստանի մշակույթի նախարարության եւ Երեւանում Սերգեյ Փարաջանովի թանգարանի հետ համատեղ Վրաստանի ազգային գրադարանում հունվարի 9-ին անցկացվեց 20-րդ դարի խոշորագույն կինոռեժիսոր եւ նկարիչ, Հայաստանի եւ Ուկրաինայի ժողովրդական արտիստ Սերգեյ Փարաջանովի 91-ամյակին նվիրված երեկո:

Երեկոյին ելույթ ունեցան լուսանկարիչ Յուրի Մեչիտովը (որի լուսանկարները, ինչպես նաեւ նկարիչ Արտյոմ Ալաբուլյանցի կտավները ներկայացվեցին միջոցառմանը), Վրաստանի «Վիրահայերի միության» նախագահ, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասան Նարեկ Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, կինոյի եւ թատրոնի ռեժիսոր Լեւոն Ուզունյանը:

Երեկոյին հանդես եկան հանրահայտ «Ռուսթավի» ազգային պարի համույթը եւ «Զեյրան» հայկական պարային խումբը: Ապա Թբիլիսիում Ադամյանի անվան պետհայդրամի թատրոնի դերասաններ Ռոբերտ Աղաջանյանն ու Հենրիխ Պետրոսյանը ասմունքեցին եւ երգեցին Սայաթ-Նովայի ստեղծագործություններից:

Հիշեցնենք, որ Սերգեյ Փարաջանովի առաջին կինոնկարը «Մոռացված նախնիների ստվերներն» է (1964թ., ք.Կիեւ), որը բազմաթիվ միջազգային մրցանակներ է ստացել եւ Փարաջանովին հռչակ բերել: Փարաջանովի գլուխգործոց կարելի է համարել «Նռան գույնը» (1969թ., «ԱՐՄԵՆՖԻԼՄ»), որը պատմում է Սայաթ-Նովայի կյանքի մասին:

Բացի ֆիլմերից՝ ռեժիսորն աշխատել է նաեւ կոլաժային ստեղծագործությունների վրա: Շատ աշխատանքներ ներկայացվել են ցուցահանդեսներում:

Սերգեյ Փարաջանովը մահացել է 1990թ. հուլիսի 21-ին՝ թոքերի քաղցկեղից, Երեւանում, ուր նա ժամանել էր «Խոստովանություն» ինքնակենսագրական ֆիլմի աշխատանքների համար:

ԹԱՏՐՈՆ

ԳԼՈՐԻԱՅԻ ԵՐՋԱՆԻԿ ՏԱՐԻՆ

Ամանորի նախաշեմին թբիլիսահայ մանուկներին ուրախ անակնկալ էր պատրաստել Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը: Մանկական նախատոնական ներկայացումը, որն ադամյանցիները խաղացին Ա.Խորավայի անվան Դերասանի տանը, կոչվում էր «Ուրախ տոնածառ»:

Ամանորի խորհրդանիշ պայծառ ու հսկայական տոնածառը, Ձմեռ պապն ու Ձյունանուշը, հայկական ու այլազգի հեքիաթների հերոսները, երգն ու պարը եւ յուրաքանչյուր երեխային տրվող նվերը արդեն իսկ Ամանորի խորհրդավոր ու հրաշք գիշերվա պատրանք էին ստեղծում փոքրիկների մոտ: Թեեւ այս անգամ մի տեսակ այլ էր ոգեւորությունը, որովհետեւ բեմին մեր թատրոնի վաղվա օրն էր՝ երիտասարդ ադամյանցիները, որոնք իրենց պրոֆեսիոնալ խաղով ամանորյա այդ օրը մեր ապագայի ցանկություններին միավորում էին եւս մեկը, այն, որ հաջորդ տարի «Ուրախ տոնածառը» դիմավորենք մեր թատրոնի վերանորոգված շենքում:

...Ուրախ ներկայացումից հետո հանդիպեցինք Բաբա-Յագայի դերակատարին:

Արտաքին տիպիկ դիմահարդարումից՝ զգեստից, ճղճղան ձայնից ու շատ տպավորիչ խաղից արդեն իսկ չէիր ասի, որ հեքիաթների ամենաանճոռնի կերպարը մարմնավորող, իսկ իրականում շատ բարետես Գլորիա Գեւորգյանը, ընդամենը մի քանի օր առաջ, հենց այս բեմում հաջողությամբ ու ամենայն քնքշությամբ խաղում էր Մոխրոտի դերում:

Մայրաքաղաքի թիվ 95 հայկական դպրոցի շրջանավարտ Գլորիան թատրոն է եկել 2008-ին, ընդունվել թատրոնին կից ստուդիա եւ հասցրել քաղել մեր թատրոնի մոհիկաններից Սերիկ Շեկոյանի, իսկ առ այսօր՝ Արմեն Բայանդուրյանի, Լեւոն Ուզունյանի դասերը: 2011 թվականից, որպես դերասանուհի նա աշխատում է Պ.Ադամյանի անվան պետհայդրամայում: Նույն տարում նա ընդունվել է նաեւ Թբիլիսիի Իվ.Զավախիշվիլու անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը եւ այժմ չորրորդ կուրսի ուսանողուհի է: Ավարտելուն պես մտադիր է նորից սովորել, այս անգամ թատերական բուհում:

- Մեր արվեստի նկատմամբ իմ մեջ արթնացրեց ուսուցչուհիս՝ Ռոզա Զոհրաբյանը,- ասում է Գլորիան,- ով հաճախ էր կազմակերպում գրական միջոցառումներ, իսկ հանգստյան օրերին պարտադիր թատրոնի բերում: Սկզբում պարտադրանք, հետո արդեն անհրաժեշտություն դարձավ աշակերտների համար: Թատրոնն ինձ օգնեց կյանքն առավել պայծառ գույներով տեսնել: Դերասանի կյանքն ամբողջովին տարբերվում է մեկ այլ մասնագիտությամբ ապրող մարդու կյանքից, որովհետեւ քեզ պարգեւած մեկ կյանքում դու բեմի միջոցով մեկից առավելն ես ապրում:

Նա հաջողությամբ խաղացել ու իր իսկ խոսքերով «ապրել» է Ֆեդերիկո Գարսիա Լորկայի «Բեռնարդա Ալբայի տունը» (բմդ.՝ Արմեն Բայանդուրյան), Վիլյամ Սարոյանի «Հե՜յ, ով կա», «Ես եւ դու» (բմդ.՝ Գագիկ Մելքումյան), Աղասի Այվազյանի «Դիպլիպիտո» (բմդ.՝ Ռոման Մաթիաշվիլի), Կարինե Խոդիկյանի «Սիրային քառանկյունի» (բմդ.՝ Հակոբ Ղազանչյան), Շարլ Պերրոյի «Մոխրոտը» (բմդ.՝ Լեւոն Ուզունյան/, «Ուրախ տոնածառ» (բմդ.՝ Արմեն Բայանդուրյան) ներկայացումներում, յուրաքանչյուր անգամ առավել հաստատելով իր ուղու ճիշտ ընտրությունը: Հետաքրքրվեցի, թե ինչպիսի՞ն էր Գլորիայի համար 2014-ը եւ ի՞նչ ծրագրեր ունի նա 2015-ի հետ կապված:

- 2014-ն ինձ համար թատերական կյանքի թերեւս ամենավառ տարին էր: «Ես եւ դու» ներկայացումը մասնակցեց երիտասարդ թատարական ռեժիսուրայի հանրապետական ամենամյա Հայաստանում կայացած 8-րդ փառատոնին: Ապա հնարավորություն ստացա խաղալ Հայաստանի թատերական գործիչների նախագահ, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Հակոբ Ղազանչյանի «Սիրային քառանկյունի» ներկայացման մեջ: Իսկ ավարտվեց տարին հեքիաթով՝ «Մոխրոտով» եւ «Ուրախ տոնածառով»: Ինքներս ապրեցինք ու մեր փոքրիկներին եւ, ինչու չէ, մեծերին ապրեցրեցրինք այդ հրաշալի աշխարհում: Բեմից անգամ զգալի էր մեր կողմից նրանց պարգեւվող ուրախությունն ու երջանկությունը, հույզերը, իսկ եթե դերասանին հաջողվում է դա անել, ուրեմն նա երեւվի իրավունք ունի դերասան կոչվելու:

- Լավատես եմ, ու դա նախեւառաջ կապում եմ մեր թատրոնի շենքի վերաբացման հետ: Ցավոք, ինձ բախտ չի վիճակվել խաղալ այս պատմական ու երանելի բեմում, ուստի 2015-ի իմ ցանկությունն ահա այդ է: Իսկ բոլորիս ցանկանում եմ, որ 2015-ի 365-ն առատ լինի ուրախությամբ, առողջությամբ ու երջանկությամբ, իսկ մեր սրտերը ջերմանան բարությունից եւ կյանքի փորձություններին դիմակայելու ուժ ունենան,- ասաց մեզ հետ զրույցում Գլորիա Գեւորգյանը:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ